Գործարքի կոդ: 450-20160621-117-687995
Գործարքի ծածկագիր: OYPW0T

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ ք. Երևան, երկու հազար տասնվեց թվականի հունիսի քսանմեկին

Մենք՝ ներքոստորագրողներս մի կողմից <<ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ>> ՓԲԸ-ն գտնվելու վայրը՝ ք. Երևան Մ. Բաղրամյան 76, որի անունից համաձայն թիվ 39/02-06-229 լիազորագրի տրված 21.06.2016թ. հանդես է գալիս **ԱՐՏԱԿ ՄՆԱՑԱԿԱՆԻ ԵՐԵՄՅԱՆԸ** , անձնագիր՝ [redacted] տրված 009-ի կողմից 06/08/2011-ին, ՀԾՀ՝ [redacted] հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ., 47Շ, 39ԲՆ , մյուս կողմից **ԱՐՏԱԿ ՓԱՅԼԱԿԻ ՅԱՅԼՈՅԱՆՆ** ծնված՝ 10/10/1979թ., id քարտ՝ [redacted] տրված 008-ի կողմից 22/04/2014-ին, ՀԾՀ՝ [redacted] հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ, ԻՍԱԿՈՎԻ Փ., 50/1Շ, 27ԲՆ

Կնքեցինք սույն համաձայնագիրը հետևյալի մասին

1. Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշել են ՀՀ Արաբկիր նոտարական տարածքի նոտար՝ Սուսաննա Դանիելյանի կողմից հաստատված 30.05.2016թ. թիվ 2552 վարձակալության պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունը՝

2. Պայմանագրի 1.3 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Վարձակալության հանձնվող Օբյեկտի ընդհանուր մակերեսը կազմում է 2513,9 քմ-ից 78.9 քմ-ը, որը գտնվում է 0.18819 հա ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող և 0.038736 հա անհատույց օգտագործման հանդիսացող հողամասերի վրա:

3. Վարձակալը իրավունք ունի իրեն վարձակալության հանձնված Օբյեկտը տրամադրել ենթավարձակալության այլ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց:

4. Պայմանագրի 3.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Սույն պայմանագրով յուրաքանչյուր ամիս վարձավճարի չափը կազմում է 131.500 /հարյուր երեսունմեկ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ, բացի այդ ԱԱՀ՝ 26.300 /քսանվեց հազար երեք հարյուր հազար/ՀՀ դրամ, ընդհամենը՝ 157.800 /հարյուր հիսունյոթ հազար ութ հարյուր/ՀՀ դրամ:

5. Սույն պայմանագրի առարկան պատկանում է վարձատուին համաձայն ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արաբկիր տարածքային ստորաբաժանման կողմից 24.06.2014թ. տրված 24062014-01-0131 սեփականության իրավունքի վկայականի:

6.Նշված անշարժ գույքը կալանքի, արգելանքի, գրավի տակ չի գտնվում համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Երևան տարածքային ստորաբաժանման Արաբկիր սպասարկման գրասենյակի կողմից 19.05.2016թ. տրված թիվ ՄՏ-19052016-01-0301 միասնական տեղեկանքի:

7. Սույն համաձայնագրի, ինչպես նաև պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է համապատասխան դատարանի քննությանը:

8. Համաձայնագրի կնքման հետ կապված ծախսերը կատարված է կողմերի կողմից: